Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԱԼԲԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ալբանիայի Հանրապետություն, ք. Տիրանա, մայիսի 28-ից 30-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Ալբանիայի Հանրապետության կրթության և սպորտի նախարար

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական համաժողովին և գլոբալ քաղաքականության ֆորումին

6. Քննարկված թեմաները

1. Բոլոնիայի գործընթացի առանցքային պարտավորությունների իրականացման համար լավագույն փորձն ու մարտահրավերները,
2. Բոլոնիայի գործընթացի առանցքային պարտավորությունների իրականացման համար լավագույն փորձն ու մարտահրավերները,
3. Թվային հմտությունների կիրառումը եվրոպական աշխատաշուկայում, բարձրագույն կրթական հաստատությունների դերը նոր մասնագիտությունների ձեռք բերման հարցում, ինչպես նաև արհեստական բանականության կիրառումը հետազոտությունների և կրթության մեջ,
4. Բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության ամրապնդում,
5. Ակադեմիական որակավորումների ճանաչման հնարավորություններն ու մարտահրավերները,
6. Բարձրագույն կրթության որակի ապահովմանն ուղղված քայլեր,
7. Այլ ընթացիկ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Սարգիս Հայոցյանը մասնակցել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական համաժողովին և Գլոբալ քաղաքականության ֆորումին՝ որպես ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի գլխավորած պատվիրակության անդամ: Սարգիս Հայոցյանը մասնակցել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական համաժողովի պաշտոնական բացման արարողությանը և մի շարք պանելային քննարկումներին, մասնավորապես՝ «Բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության» և «Բարձրագույն կրթության որակի ապահովում. գլոբալ հեռանկարներ և ռազմավարություններ» խորագրերով նիստերին: Նիստերի ընթացքում քննարկվել են Բոլոնիայի գործընթացի հիմնական պարտավորությունների իրականացման փորձը և մարտահրավերները, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում շարժունությունը խթանելու համար միջազգային համագործակցության ակտիվացումը, արհեստական բանականության կիրառումը հետազոտությունների և կրթության ոլորտներում, ակադեմիական որակավորումների ճանաչման հնարավորություններն ու մարտահրավերները, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ակադեմիական գերազանցության հիմնարար արժեքները, Բոլոնիայի գործընթացի շրջանակում բարձրագույն կրթության ոլորտում առկա նոր մարտահրավերները և դրանց լուծումները: Անդրադարձ է կատարվել նաև ակադեմիական բարեվարքության, բուհական ինքնավարության, բարձրագույն կրթության համար հանրային պատասխանատվությանն ուղղված միջոցառումների խթանմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի շրջանակում ընդունվել է Տիրանայի նախարարական կոմյունիկեն և Գլոբալ քաղաքականության ֆորումի հայտարարությունը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ոչ պաշտոնական աշխատանքային հանդիպում է տեղի ունեցել ԳԴՀ կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության խորհրդարանական պետքարտուղար Յենս Բրանդենբուրգի հետ, ինչպես նաև Գերմանիայի պատվիրակության ներկայացուցիչների հետ քննարկվել են ս.թ.

հունիսի 27-ից 28-ը Երևանում կայանալիք Հայաստան-Գերմանիա գիտության օրեր միջոցառմանը առնչվող հարցեր:

Պատվիրակության ղեկավար Արթուր Մարտիրոսյանի և պատվիրակության մյուս անդամների հետ Սարգիս Հայոցյանը մասնակցել է Բոլոնիայի գործընթացին անդամ երկրների մի շարք պատվիրակների հետ հանդիպումներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

31.05.2024թ.